## ** ԻՆ

Հնչէ՛ք լարք իմ դալուկ սրտի
Երգը սիրոյ անմեղ կուսի
Ձայնէ՛ք նորան վիշտ իմ խորունկ՝
Եւ դուք երկնից անհոգ թռչունք։

Փչի՛ր և դու մեղմոտ հովիկ
Անուշահոտ բուրմունք ծաղկանց,
Օծիր կուրծքը կուսին հեզիկ՝
Սիրոյ շաղաղ իմ տենչանաց։

Սիրարբ սոխակ, աղուոր երգիչ,
Ողբայ անձայն երգդ սփոփիչ.
Թշուառ և դու իմ բախտակից,
Ե՞ր են օրեր մեր դառնալից։

Ի՞նչ փայլթ քեզի սէր հայուհի,
Անմեղ զոհդ չար ատչորուի.
Սիրոյդ կարօտ, վէրքը կրծքում
Սգայ իւր սէր ոխուր սրտում։

Մի՛ սաւառնէ լերանց բարձունք
Աւերակաց դու իսկ պատճառ,
Անդ կհալածեն դարձեալ արցունք
Լացկոտ աչաց իմ անդադար։

Ա. Տ.-Գ.